

**Հարցաշար**  
**Առարկայական օլիմպիադայի «Հայոց Եկեղեցու**  
**պատմություն» առարկայի**  
**Հարապետական փուլ**  
**9-րդ դասարան - 120 րոպե**

N 1-4

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

**1. Ո՞վ էր Սողոմոն Իմաստունի հայրը. (0,5 միավոր)**

- 1) Հովսեփը
- 2) Դավիթը
- 3) Մովսեսը
- 4) Աբրահամը

**2. Ի՞նչ է կոչվում պատարագի ժամանակ օգտագործվող արծաթե կամ ոսկե բաժակը.**

- 1) փարչ (0,5 միավոր)
- 2) պնակ
- 3) սկիհ
- 4) սափոր

**3. Ըստ ավանդության՝ մկրտության ժամանակ Ս. Գրիգոր Լուսավորիչը Տրդատ արքային վերանվանել է. (0,5 միավոր)**

- 1) Հովհաննես
- 2) Թադեոս
- 3) Պետրոս
- 4) Բարդուղիմեոս

**4. Որտե՞ղ է թաղվել Գևորգ Գառնեցին:**

- 1) Շուղրի Կարմիր վանքում (0,5 միավոր)
- 2) Անիի մերձակա Հոռոմոսի վանքում
- 3) Կարսում գտնվող Ս. Առաքելոց վանքում
- 4) Վանի մոտ գտնվող Ձորավանքում

N 5-9

**Կառուցված պատասխանով առաջադրանքներ**

**5. Հրեշտակի պատվիրանի համաձայն՝ Չաքարիա քահանան իր որդուն անվանեց Հովհաննես, որ նշանակում է \_\_\_\_\_ : (1 միավոր)**

**6. Հորդանան գետում մկրտության ժամանակ երկնքից հնչած ձայնով ժողովրդին հայտնվեց, որ Հիսուս Աստծո Որդին է: Այս պատճառով տոնը կոչվում է \_\_\_\_\_ : (1 միավոր)**

**7. \_\_\_\_\_ թ. Ս. Հովհաննես Գ Օձնեցու նախաձեռնությամբ Դվինում եկեղեցական ժողով է**

գումարվում, որտեղ հատուկ կանոն է ընդունվում պավլիկյանների դեմ: (1 միավոր)

8. Տեր \_\_\_\_\_ գնում է տեսնելու Շեխի որդի Հիսեին, և նրա կողմից մեծ պատվի է արժանանում. վերջինս նրան տալիս է շատ պարգևներ, նաև դրոշակ՝ վրան խաչ դնելու և դրանով միշտ իր մոտ մտնելու համար: (1 միավոր)

9. \_\_\_\_\_ ջերմ ընդունելության է արժանանում Ալեքսանդր I-ի կողմից և նրանից որպես նվեր ստանում վեղարի ադամանդակուռ խաչ: (1 միավոր)

**N 10-11**

**Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից**

10. **Հոգևորականի անունը համապատասխանեցնել նվիրապետական աթոռին. (1միավոր)**

- 1. Կարապետ Եվդոկացի
- 2. Աբրահամ պատրիարք
- 3. Զաքարիա Գ
- 4. Հովակիմ եպիսկոպոս

1	
2	
3	
4	

- ա. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն
- բ. Աղթամարի կաթողիկոսություն
- գ. Աղվանից կաթողիկոսություն
- դ. Սսի կաթողիկոսություն
- ե. Երուսաղեմի հայոց պատրիարքություն

11. **Թվականները համապատասխանեցնել իրադարձություններին. (1 միավոր)**

- 1. Մատթեոս արքեպիսկոպոսի Հայոց կաթողիկոս հաստատվելը
- 2. Գևորգյան հոգևոր ճեմարանի հիմնումը
- 3. Առաջին հայկական բողոքական վարժարանի հիմնումը Կ.Պոլսում
- 4. Գանձասարի հայոց կաթողիկոսության վերացումը և դրա փոխարեն մետրոպոլիտության ստեղծումը
- 5. Մայր Աթոռի բողոքների հիման վրա ցարական կառավարության կողմից բողոքական միսիոներների քարոզչության արգելումը հայերի շրջանում

- ա. 1834 թ.
- բ. 1815 թ.
- գ. 1835 թ.
- դ. 1836 թ.
- ե. 1858 թ.
- զ. 1874 թ.

1	
2	
3	
4	
5	

**N 12-13**

**Աշխատանք սկզբնադրյուրով՝ կազմված 2 հարցից**

12. «Որպես երազ լուսեղեն  
Ջյունապայծառ ու շողուն՝  
Դո՛ւ, անխորտակ ապավեն

Հրաճարակ մեր հոգուն ...»

1. Ո՞ր բանաստեղծությունից է մեջբերված քառատողը: (1 միավոր)

---

2. Ո՞վ է բանաստեղծության հեղինակը: (1 միավոր)

---

13. «Ձեր Տեր Հիսուս Քրիստոս աղքատների հետ էր ապրում և համեստ զգեստներ էր կրում, իսկ դու շքեղ հագուստներով ու ոսկեզօծ մորուքով ես ներկայացել»:

1. Ու՞մ աշխատությունից է մեջբերումը: (1 միավոր)

---

2. Ու՞մ մասին է խոսքը: (1 միավոր)

---

#### N 14-16

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի  
իմացություն պահանջող առաջադրանք

#### N 14

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ու՞մ անունն է ավելորդ: (0,5 միավոր)

Գրիգոր Լուսավորիչ, Արիստակես, Վրթանես, Փառեն, Ներսես Մեծ:

---

---

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է ավելորդ: (0,5 միավոր)

Զվարթնոց, Տաթև, Աղթամար, Հռոմկլա, Սիս:

---

---

#### N 15

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. (1 միավոր)

- ա. Մատթեոս, Մարկոս, Պողոս, Հուդա
  - բ. Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես
  - գ. Պողոս, Հուդա, Ղուկաս, Հովհաննես
-

**15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. (1 միավոր)**

ա. Գրիգոր Բ Վկայասեր, Ներսես Շնորհալի, Ստեփանոս Դ Հռոմկլայեցի, Հովհաննես Զ Սսեցի  
բ. Ստեփանոս Դ Հռոմկլայեցի, Հովհաննես Զ Սսեցի, Գրիգոր Դ Տղա, Գրիգոր Զ Ապիրատ  
գ. Գրիգոր Բ Վկայասեր, Ներսես Շնորհալի, Գրիգոր Դ Տղա, Գրիգոր Զ Ապիրատ

**N 16**

**16.1. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ.**

*(2 x 0.5 = 1 միավոր)*

- 1) 1292 թ. մամլուքները գրավեցին Հռոմկլան և Ստեփանոս Օրբելյանին գերի տարան:
- 2) Գրիգոր Դ կաթողիկոսը 1178 թ. հրավիրում է Հռոմկլայի համահայկական Եկեղեցական ժողովը:
- 3) 1441 թ. մայիսի 28-ին 12 եպիսկոպոսների ձեռքով Գրիգոր Թ Մուսաբեկյանը օծվում է Ամենայն Հայոց կաթողիկոս:
- 4) 1549-1551 թթ. Դավիթ Թոռնիկյանը բանակցություններ է Ջահան շահի հետ՝ Վասպուրականի թագավորությունը վերականգնելու հարցի շուրջ և անգամ նրան ներկայացնում գահի հավակնորդին:
- 5) 1629 թ. Մովսես Տաթևացին ընտրվում է Ամենայն Հայոց կաթողիկոս:


**16.2. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ.**

*(2 x 0.5 = 1 միավոր)*

- 1) 1868 թ. հրապարակվեցին հայկական ծխական դպրոցների առաջին ընդհանուր կանոնները:
- 2) 1864 թ. Խորեն Աշրգյան պատրիարքի և Մաղաքիա Օրմանյանի ջանքերով հիմնվում է Ներսիսյան դպրոցը:
- 3) 1897 թ. ապրիլին Պետական խորհրդի որոշմամբ հայկական ծխական բոլոր դպրոցները դրվում են Հայոց կաթողիկոսի տնօրինության ներքո:
- 4) 1824 թ. Ներսես արքեպիսկոպոսը նշանակվում է Վրաստանի հայության հոգևոր առաջնորդ և տեղափոխվում Թիֆլիս:
- 5) 1837 թ. ցարական կառավարության հրամանով Սյունյաց մետրոպոլիտությունը դադարեց գոյություն ունենալուց՝ վերածվելով եպիսկոպոսական թեմի:


**N 17**

**Շարադրանք (2 միավոր)**

**Ներկայացրեք Հայոց եկեղեցու վերելքը Վազգեն Ա կաթողիկոսի օրոք: Վերլուծեք և գնահատեք նրա գործունեությունը:**